ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2021, № 2, 79-87 *Ֆինանսներ*
https://doi.org/10.46991/BYSU:G/2021.12.2.079

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հոդվածում քննարկվել են ՀՀ տնտեսական զարգացման ներկա փուլում բյուջետային քաղաքականության մշակման և իրականացման հիմնահարցերը: Բացահայտվել են այդ ոլորտում առկա հիմնախնդիրները և բյուջետային գործընթացի վրա դրանց ազդեցության ձևերը: Ներկայացվել են երկարաժամկետ հատվածում բյուջետային քաղաքականության կատարելագործման հեռանկարները: Հիմնավորվել է տնտեսական ռազմավարական պլանավորման և դրանից բխող բյուջետային քաղաքականության մշակման ու իրականացման անհրաժեշտությունը, ներկայացվել են դրա իրագործման ուղիները:

Բանալի բառեր – *բյուջետային քաղաքականություն, բյուջետային գործընթաց, բյուջետային եկամուտներ և ծախսեր, պետական ֆինանսներ*

Պետական ֆինանսների արդյունավետ և թափանցիկ կառավարումը բնակչության կյանքի որակի և կենսամակարդակի բարձրացման, երկրում կայուն տնտեսական աճի ապահովման, տնտեսության արդիականացման և սոցիալ-տնտեսական զարգացման, ինչպես նաև ռազմավարական նշանակության մի շարք այլ խնդիրների լուծման կարևոր պայման է: Չնայած վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում բյուջետային հարաբերությունների իրավական կարգավորման և մեթոդաբանական ապահովվածության ուղղություններով իրականացված զգալի վերափոխումներին և արձանագրված որոշակի առաջընթացին՝ այդուհանդերձ դեռևս ձևավորված չէ պետական ֆինանսների կառավարման ամբողջական և արդյունավետ գործող համակարգ: Ակնհայտ է, որ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններն ու կուտակված բազմաբնույթ հիմնախնդիրները պահանջում են բյուջետային ոլորտի բարեփոխումների շարունակություն՝ ուղղված բյուջետային գործընթացի որակական մակարդակի բարձրացմանը և բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության ապահովմանը:

Հարկ է նշել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում պետական ֆինանսների կառավարման ոլորտում դեռևս գոյություն ու-

նեն մի շարք հիմնախնդիրներ, որոնք էականորեն նվազեցնում են բյուջետային գործընթացի արդյունավետությունը: Անդրադառնանք դրանցից հիմնականներին:

- Ռազմավարական պլանավորման ամբողջական համակարգի բացակայությունը, ռազմավարական և բյուջետային պլանավորման միջև թույլ կապը: Հանրապետությունում հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման, հետևաբար նաև այդ ուղղությամբ համապատասխան կանխատեսումների իրականացման ինստիտուտը, կարելի է ասել, գրեթե բացակայում է: Նման պայմաններում ռազմավարական պլանավորում, որպես այդպիսին, չի իրականացվում, և բյուջեն դառնում է հիմնականում միայն առաջիկա տարվա ֆինանսական փաստաթուղթ՝ չհետապնդելով երկարաժամկետ նպատակներ: Հետևաբար, ՀՀ պետական ֆինանսների կառավարման համակարգի զարգացման կարևոր քայլերից մեկը պետք է լինի ռազմավարական պլանավորման մեխանիզմների ներդրումը և բյուջետային գործընթացի հետ դրանց սերտ փոխկապակցումը:
- Տնտեսության կառավարման ծրագրանպատակային գործիքների թույլ փոխկապվածությունը և դրանց կիրառման միջև ոչ հստակ հարաբերակցությունը: Հանրապետությունում կուտակված հիմնախնդիրների բնույթը և ծավալը ենթադրում են դրանց լուծման համար ծրագրանպատակային մոտեցումների կիրառում: Պատահական չէ այն, որ վերջին տարիներին այդ ուղղությամբ հանրապետությունում ձեռնարկվել են որոշակի քայլեր, և մի քանի ոլորտներում ներդրվել են կառավարման ծրագրանպատակային գործիքներ: Դրանով հանդերձ՝ վերջիններիս միջև ապահովված չէ կոորդինացվածության բավարար աստիճան, ինչի հետևանքով միասնական մոտեցում գոյություն չունի տնտեսության կառավարման և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման վերաբերյալ: Գտնում ենք, որ առաջիկա տարիներին բյուջետային գործընթացի բարելավման առումով պետք է հատկապես կարևորել ծրագրանպատակային կառավարման միասնական և համալիր համակարգի ներդրումը՝ հիմնված դրա տարրերի սերտ փոխգործակցության ապահովման վրա:
- Բյուջետային պլանավորման գործընթացում տնտեսության ճյուղային և ոլորտային զարգացման ծրագրերի կիրառման սահմանափակ պրակտիկան: Ընդհանրապես, հանրապետությունում գրեթե բացակայում են տնտեսության ճյուղային և ոլորտային զարգացման պետական ծրագրերը՝ չնչին բացառություններով: Տնտեսության զարգացման միասնական տեսլականի բացակայության պայմաններում բյուջետային գործընթացը դառնում է ընդամենը իրավիճակային խնդիրների լուծման միջոց՝ չհետապնդելով երկարաժամկետ նպատակներ: Մինչդեռ այն ոչ միայն պետք է ուղղված լինի առաջիկա տարում առկա հիմնախնդիրների լուծման ֆինանսական ապահովվածությանը, այլ նաև

երկարաժամկետ զարգացման նախադրյալների ստեղծմանը: Հետևաբար, տնտեսության տարբեր ոլորտների զարգացման պետական ծրագրերը կարող են էականորեն նպաստել բյուջետային գործընթացի բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանը:

- Բյուջետային ծախսերի չհիմնավորված ավելացման պայմանների և պատճառների առկայությունը՝ ծախսերի օպտիմալացման խթանների բացակայության պայմաններում: Ընդհանուր առմամբ, բյուջետային ծախսերի ավելացումը դեռևս բավարար երաշխիք չէ առավել մեծ ծավալի հիմնախնդիրների լուծման համար: Ոչ պակաս կարևոր է ծախսային քաղաքականության նպատակայնության և հասցեականության ապահովումը՝ դրանք խնայողաբար ծախսելու պայմաններում: Այս առումով բյուջետային ծախսերը պետք է ավելացնել խիստ հիմնավորված՝ միաժամանակ սահմանելով դրանց խնայողաբար օգտագործման խթաններ:
- Պետական ֆինանսական վերահսկողության համակարգի գործունեության բացթողումները և ոչ բավարար չափով դրա կողմնորոշումը բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատմանը: Ներկայումս հանրապետությունում իրականացվող բյուջետային վերահսկողությունն առավելապես կենտրոնացած է բյուջետային ծախսերի օրինականության և հասցեականության գնահատման վրա՝ երկրորդ պլան մղելով դրանց արդյունավետությունը: Կարծում ենք՝ նման իրավիճակը կարիք ունի արմատական փոփոխությունների, քանի որ վերահսկողության գործընթացում առաջնայինը պետք է լինի ծախսերի արդյունավետության գնահատումը:
- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ոչ բավարար ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը սեփական ծախսային պարտավորությունների և բյուջետային իրավասությունների իրականացման հարցում: Ընդհանուր առմամբ, միջբյուջետային հարաբերությունների կարգավորումը բյուջետային գործընթացի բարելավման կարևոր պայմաններից է: Հատկապես տեղական ինքնակառավարման մակարդակում հաշվեկշռվածություն ապահովված չէ ծախսային պարտավորությունների և եկամտային հնարավորությունների միջև, որի պատճառով անհնար է դառնում այդ մարմիններին վերապահված լիազորությունների և գործառույթների պատշաճ և լիարժեք իրականացումը: Ուստի՝ հանրապետությունում հստակեցման և խիստ տարանջատման կարիք ունեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծախսային պարտավորությունները՝ դրանց իրականացման համար անհրաժեշտ և համարժեք եկամտային աղբյուրների ամրագրմամբ:
- Բյուջեի բացության ու թափանցիկության, ինչպես նաև հաշվետվողականության մեխանիզմների ցածր արդյունավետությունը և այդ գործընթացում քաղաքացիական հասարակության ոչ բավարար

չափով ներգրավվածությունը՝ հատկապես բյուջետային միջոցների օգտագործման արդյունքների և դրված նպատակներին հասնելու աստիճանի գնահատման հարցերում և այլն:

Հայաստանի Հանրապետությունում բյուջետային գործընթացի արդյունավետության վրա ազդում են պետական ֆինանսների կառավարման որակի ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև տարեկան, միջինժամկետ և երկարաժամկետ բյուջետային պլանավորման մեխանիզմների, բյուջետային ֆինանսավորում ստացող գերատեսչություններում ներքին ֆինանսական վերահսկողության և աուդիտի ժամանակակից համակարգերի, բյուջետային միջոցների արդյունավետության և պետական կառավարման ոլորտում ֆինանսական մենեջմենթի որակի գնահատման մոտեցումների բացակայությունը:

Բացի վերը թվարկված հիմնախնդիրներից, պետք է նշել, որ հանրապետությունում պետական ֆինանսների կառավարման գործընթացն առավելապես միտված է ֆինանսական ընթացակարգերի և սահմանված պահանջների պահպանմանը՝ չապահովելով կայուն խթաններ և համապատասխան գործիքներ բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության մակարդակների բարձրացման համար: Առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետությունում իրականացվելիք բյուջետային բարեփոխումները պետք է ուղղված լինեն նշված խնդիրների լուծմանը, սոցիալ-տնտեսական զարգացման նպատակների և գերակայությունների հետ բյուջետային գործընթացի փոխկապակցմանը, բյուջետային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրական դաշտի բարելավմանն ու ինստիտուցիոնալ և մեթոդաբանական ապահովվածության մակարդակի բարձրացմանը: Նշված նպատակներին հասնելու համար պետք է կարևորել հատկապես հետևյալ խնդիրների լուծումը.

1. Բյուջետային գործընթացում կառավարման ծրագրանպատակային մեթոդների ամբողջական ներդրում: Բյուջետային միջոցների օգտագործումը պետք է սերտորեն փոխկապակցվի տնտեսության ոլորտային զարգացման ծրագրերի հետ՝ ուղղված լինելով դրանցում սահմանված արդյունքային ցուցանիշների ձեռքբերմանը.

2. Բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակում: Պետական ֆինանսական վերահսկողության հիմնական խնդիրը պետք է դառնա բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատումը, ոչ թե միայն դրանց օրինականության, հասցեականության և նպատակայնության որոշումը:

3. Պետական կառավարման ոլորտում ֆինանսական մենեջմենթի որակի բարձրացում, բացության և թափանցիկության անհրաժեշտ մակարդակի ապահովում:

Մեր կարծիքով, նշած խնդիրների լուծման հիմնական նախադրյալներ պետք է դառնան.

- պետական բյուջեի երկարաժամկետ կայունության և հաշվեկշռվածության ապահովումը,
- պետության և վարչատարածքային միավորների ծախսային պարտավորությունների և իրավասությունների հստակ տարանջատումը,
- պետություն-մասնավոր հատված գործընկերության խորացումը:

1. Պետական բյուջեի երկարաժամկետ կայունության և հաշվեկշռվածության ապահովումը կարևորագույն նախապայման է մակրոտնտեսական կայունության համար, որն իր հերթին անհրաժեշտ է տնտեսական աճի ապահովման, ներդրումային միջավայրի բարելավման, տնտեսության մրցունակության բարձրացման համար: Մեր կարծիքով, պետական բյուջեի երկարաժամկետ կայունության և հաշվեկշռվածության ապահովման համար անհրաժեշտ է ՀՀ բյուջետային ռազմավարության մշակում ու իրականացում, որը պետք է ընդգրկի երկարաժամկետ հատվածում՝ 12-15 տարիների կտրվածքով, հանրապետության բյուջետային համակարգի զարգացման հիմնական ցուցանիշների կանխատեսումները, բյուջետային քաղաքականության ուղղությունների ձևավորման ու իրականացման պայմաններն ու գործոնները, երկարաժամկետ հատվածում պետության սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նպատակներին հասնելու գործողությունների ֆինանսավորման մեխանիզմները: Դրա հիմնական նպատակը պետք է լինի երկարաժամկետ հատվածում հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային այն նպատակներին հասնելու ֆինանսական հնարավորությունների և նախադրյալների որոշումը, որոնք ամրագրված են երկրի Սահմանադրությամբ և ռազմավարական այլ փաստաթղթերով: Բյուջետային ռազմավարության մշակման ժամանակ պետք է հիմնվել հետևյալ սկզբունքների վրա.
- կառավարության կողմից հանրապետության սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման բազմատարբերակ կանխատեսումների իրականացում և բազային տարբերակի որոշում,
- թույլատրելի և ոչ վտանգավոր մակարդակում պետական պարտքի ձևավորում,
- գործող ծախսային պարտավորությունների անվերապահ կատարման անհրաժեշտությունից ելնելով՝ բյուջետային ցուցանիշների սահմանում,
- ծախսային նոր պարտավորությունների ստանձնում՝ հաշվի առնելով դրանց արդյունավետությունը և առկա ռեսուրսների սահմաններում կատարման մեխանիզմներն ու ժամկետները,
- հանրապետության սոցիալ-տնտեսական երկարաժամկետ կանխատեսումների և պլանավորվող բյուջետային ծախսերի համադրելիության ապահովում,

• բյուջետային ծախսերի կառուցվածքի և ծավալի ճկունության ապահովում, այդ թվում նաև՝ անհրաժեշտության դեպքում վերաբաշխումներ կատարելու կամ բյուջետային եկամուտների հավաքագրման ոչ բարենպաստ զարգացումների պարագայում դրանք կրճատելու ուղղություններով,

• բյուջետային ռիսկերի կառավարման համակարգի ստեղծում, որը կներառի հնարավոր ռիսկերի տեսակները, դրանց առաջացման հավանականությունը, ազդեցության գնահատականը, կառավարման հնարավորությունները, ինչպես նաև դրանց կանխարգելման կամ հետևանքների հաղթահարման ուղղությամբ անհրաժեշտ քայլերը:

Ընդ որում, բյուջետային ռազմավարությունը պետք է մշակվի հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրին համահունչ և բխի դրանից:

Պետական բյուջեի դեֆիցիտի շարունակական աճի ռիսկի պահպանման պայմաններում կարևոր նշանակություն պետք է ստանան նաև վարվող հարկաբյուջետային քաղաքականությանը համահունչ պետական պարտքային քաղաքականության մշակումն ու իրականացումը՝ ելնելով պետական պարտքը թույլատրելի և կառավարելի սահմաններում պահպանելու անհրաժեշտությունից:

2. Բյուջետային քաղաքականության կատարելագործման կարևոր ուղղություններից մեկը պետք է դառնա պետական և համայնքային բյուջեների միջև ծախսային պարտավորությունների և եկամտային աղբյուրների հստակ բաշխումը: Անհրաժեշտ է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների գույքագրում՝ կառավարման տարբեր մակարդակների լիազորությունների օպտիմալացման, ինչպես նաև տեղական նշանակության որոշ խնդիրների լուծումը տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելու նպատակով: Ընդ որում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակների միջև լիազորությունների բաշխումը պետք է իրականացնել՝ ըստ դրանց իրականացման տնտեսական նպատակահարմարության:

3. Պետություն-մասնավոր հատված գործընկերության խորացումը հնարավորություն կտա ապահովելու պետական և մասնավոր ռեսուրսների օպտիմալ համադրում՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային խնդիրների լուծման նպատակով: Պետություն-մասնավոր հատված գործընկերության սկզբունքների վրա հիմնված նախագծերի իրականացումը ենթադրում է բիզնեսի և պետական հատվածի փոխգործակցության իրավական ամրագրում, միջինժամկետ և երկարաժամկետ նախագծերի իրականացում, նպատակների հստակ ամրագրում, որոնք հնարավորություն կտան վերջնական արդյունքների տեսանկյունից գնահատելու նախագծի արդյունավետությունը: Պետություն-մասնավոր հատված փոխգործակցության գործիքների զար-

գացումը հատկապես նպաստում է ենթակառուցվածքային ոլորտներում ներդրումների ներգրավմանը, ինչը հատկապես առաջնային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ շատ երկրներում ներդրումային գործունեության մեջ պետության դերը խիստ կանոնակարգված է և մի շարք պայմաններով ու պահանջներով սահմանափակված: Այս առումով հանրապետությունում պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում իրականացվող ներդրումային նախագծերը պետք է ուղղված լինեն բացառապես պետական իշխանության իրավասության ներքո գտնվող և հասարակական նշանակություն ունեցող կարևոր սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: Այլ կերպ ասած՝ պետք է բացառել բյուջետային միջոցների հաշվին ներդրումային ֆինանսավորման միջոցով մասնավոր հատվածի համար ֆինանսական տեսանկյունից որոշակիորեն «բարենպաստ» պայմանների ստեղծումը և այդ կերպ պետական միջոցների փոշիացումը:

Ներկայումս հանրապետությունում պետություն-մասնավոր հատված համագործակցության վրա բացասաբար են անդրադառնում՝

- պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում նախագծերի մշակման ու իրականացման համակարգային սկզբունքների բացակայությունը,
- հանրային նշանակություն ունեցող ոլորտներում իրականացվող նախագծերում մասնավոր ընկերությունների ներգրավման սահմանափակ հնարավորությունները,
- պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի արդյունավետության գնահատման չափորոշիչների բացակայությունը:

Գրեթե ձեռք չեն բերվել պետություն-մանավոր հատված համագործակցության շրջանակներում ենթակառուցվածքային օբյեկտների ստեղծման և շահագործման վերաբերյալ համաձայնություններ: Այս առումով, կարծում ենք, բավականաչափ արդիական է հանրապետությունում «պետություն-մասնավոր հատված» համագործակցության օրենսդրական հիմքերի կատարելագործումը:

Ինչպես արդեն նշեցինք, հանրապետությունում պետական ծրագրերի մշակման պրակտիկան ունի մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես.

1. Ռազմավարական պլանավորման համակարգային կազմակերպման իրավական հիմքերի բացակայությունը: Կարծում ենք՝ հանրապետությունում պետք է ներդնել պետական ծրագրերի (ինչպես երկրի սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման, այնպես էլ տնտեսության տարբեր ոլորտների կտրվածքով) մշակման ու իրականացման ինստիտուտը, որը պետք է հիմնված լինի ծրագրանպատակային գործիքների, ինչպես նաև երկարաժամկետ բյուջետային պլա-

նավորման վրա: Ընդ որում, նշված ծրագրերի միջև պետք է ապահովվի խիստ համապատասխանություն ինչպես հռչակված նպատակների, այնպես էլ դրանց հասնելու ուղղությամբ իրականացվելիք քայլերի առումով: Այս դեպքում բյուջետային փաստաթուղթը պետք է դառնա սահմանված նպատակներին հասնելու և խնդիրների լուծմանն ուղղված միջոց:

2. Սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման հայեցակարգի, հեռանկարային կանխատեսումների և բյուջետային ռազմավարության բացակայությունը: Նման պայմաններում բյուջեն ավելի շատ դառնում է իրավիճակային և օպերատիվ խնդիրների լուծման գործիք, չի հետապնդում երկարաժամկետ և խոշոր ծրագրերի իրականացման նպատակ, զրկվում է երկրի կայուն զարգացման ապահովման հնարավորություններից, իր վրա ավելի շատ է կրում քաղաքական գործոնի ազդեցությունը և դրանով պայմանավորված՝ փոփոխությունների հավանականությունը: Հատկանշական է, որ ներկայումս հանրապետությունում գոյություն ունեցող որոշ ոլորտային զարգացման ծրագրեր միմյանցից կտրված են, կարգավորված չեն դրանց և բյուջետային փաստաթղթի միջև «փոխհարաբերությունները», կառուցվածքային և տրամաբանական առումներով միմյանց հետ համադրելի չեն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրապետությունում գոյություն չունի ռազմավարական զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման միասնական մեթոդաբանություն, դրանց ներկայացվող համընդհանուր պահանջներ, ապահովված չէ խնդիրներ-ռեսուրսներ-արդյունքներ տրամաբանական շղթան: Այլ կերպ ասած՝ դրանք չեն համապատասխանում ծրագրանպատակային կառավարման սկզբունքներին և մոտեցումներին:

Այս առումով հատկապես կարևորում ենք հանրապետությունում անցումը երկարաժամկետ բյուջետային պլանավորմանը, որը պետք է իրականացվի ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակներում: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել մեթոդական ցուցումներ սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման կանխատեսումների և բյուջետային ռազմավարության վերաբերյալ, որոնք պետք է նպաստեն միասնական ռազմավարական պլանավորման մեջ բոլոր պետական ծրագրերի ինտեգրմանը:

Պետք է նշել, որ ծրագրանպատակային բյուջեին անցումը ենթադրում է նաև բյուջետային ֆինանսավորում ստացող մարմինների ֆինանսական ինքնուրույնության հարաբերական ընդլայնում և հետևաբար՝ դրված խնդիրների լուծման և պլանավորված արդյունքների ստացման համար այդ մարմինների պատասխանատվության աստիճանի բարձրացում: Կարծում ենք՝ հանրապետությունում պետական ֆինանսական վերահսկողությունն իրականացնող մարմինների և առաջին հերթին ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեությունը պետք է

կազմակերպվի և իրականացվի վերահսկվող օբյեկտների ռիսկայնության տեսանկյունից: Այսինքն, նախ և առաջ վերահսկողության պետք է ենթարկվեն այն ոլորտները և բյուջետային ֆինանսավորում ստացող մարմինները, որոնցում պետական միջոցների փոշիացման կամ անարդյունավետ օգտագործման հավանականությունն ավելի բարձր է: Անշուշտ դա ենթադրում է բյուջետային ֆինանսավորում ստացող ոլորտների ռիսկայնության դասակարգման չափորոշիչների մշակում:

Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ մեր առաջարկությունների գործնական իրացումը հնարավորություն կտա որոշակիորեն բարձրացնելու երկրում իրականացվող բյուջետային քաղաքականության արդյունավետությունը:

ВАРДАН БОСТАНДЖЯН, ГЕВОРГ КИРАКОСЯН – *Проблемы бюджетной политики и перспективы их решения в Республике Армения.* - Статья посвящена вопросам организации бюджетного процесса. Обсуждаются основные подходы к составлению бюджета и влияющие на него факторы. Представлены основные способы бюджетирования, их преимущества и недостатки. Изучены действующие в процессе составления бюджета ограничения и связанные с ними политические и экономические факторы. В контексте финансового планирования изучены основные подходы бюджетного планирования и представлены пути их практического использования на настоящем этапе экономического развития республики. Разработаны подходы усовершенствования бюджетного процесса и использования бюджетных средств.

Ключевые слова: *бюджетная политика, бюджетный процесс, бюджетные доходы и расходы, государственные финансы*

VARDAN BOSTANJYAN, GEVORG KIRAKOSYAN – *Problems of Budget Policy and Prospects for their Solution in the Republic of Armenia.* – The article is devoted to the examination of questions of budget process organization. The article discusses The basic approaches of budgeting and the factors that influence it. The basic methods of budgeting and their advantages and disadvantages are presented in the article. The existing limitations in the budgeting process and related political and economic factors are examined as well. The basic approaches of budget planning in the context of financial planning are explored and presented the ways of their practical use at the present stage of economic development of the Republic. Approaches to improve the budgetary process and increase the use of state funds have been developed.

Key words: *budget policy, budget process, budget revenues and expenditure, public finance*